ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՇԻՐԻՄԻՆ

ԱՂՈՒՀԱՑՈՎ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Հինգշաբթի, Հունիսի 27-ին, Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընկերակցությամբ բարձրաստիճան Հոգևոր Հայրերի, ուղևորվեց Օշական՝ մասնակիցը դառնալու Ս. Սահակի և Ս. Մաշտոցի՝ մեր երանելի թարգմանիչների տոնի արարողությանը, խոնարհվելու նրանց խնկելի հիշատակի առջև: Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու մուտքին Նորին Սրբությանը դիմավորեցին Արագածոտնի թեմական առաջնորդ Նավասարդ վրդ. Կճոյանը, մարզպետ Հրաչյա Գրիգորյանը, մարզային իշխանության ներկայացուցիչներ:

Տոնի առթիվ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցվեց Պատարագ՝ ձեռամբ Հոգևոր Մեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծայրագույն վրդ. Նաջարյանի:

Պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետը ներկաներին իր Հայրապետական պատգամը տվեց, որը խոսք էր գնահատանքի ու երախտիքի՝ Մեսրոպ Մաշտոց վարդապետի և Սահակ Պարթև Կաթողիկոսի ազգանվեր գործին: «Նրանք՝ Ս. Մեսրոպ և Ս. Սահակ, նրանք՝ մեր Ոսկեդարի ճարտարապետները, և նրանց հետ իրենց աշակերտները, ծաղկեցրին Աստծո խոսքը, իմաստությունը և այն թարգմանեցին ժողովրդի համար, երկնային ճշմարտությունը հասու դարձրեցին մեզ, անեղի իմաստը զարդարեցին գրով: Մեր ոսկետառ այբուբենը, ստեղծված Մեսրոպի հանճարի ուժով և Աստծո զորությամբ, ամենահաղթ, անպարտելի մի բանակ է՝ բաղկացած 36 զինվորներից: Մեր գործով արժանի լինենք այդ բանակի զինվորը դառնալուն, նոր շունչ և լիցք հաղորդենք մեր թարգմանիչների սուրբ գործին և ոգեշնչվենք նրանցով», պատգամեց Վեհափառ.

Հայրապետը: Երկու նվիրական անուններից անբաժան է Վռամշապուհ Արքայի անունը, արժանին մատուցենք նաև նրա հիշատակին, ավելացրեց Նորին Սրբությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՔԱՐՈՋԵԼԻՍ

Ապա Վեհափառ Հայրապետը պատմական մի ճամփորդություն կատարեց 84 տարիներ առաջ, երբ այդ նույն օրը Հայոց Գևորգ Ե Կաթողիկոսը այցելել էր Օշական՝ խոնարհվելու Մեսրոպի սուրբ շիրմին, հարգանք մատուցելու մեր թարգմանիչներին՝ Հայ Տառերի Գյուտի 1500-ամյակի տոնակատարության առթիվ, հիշեց, որ օրվա պատարագիչն էր եղել Խորեն Մուրադբեկյան նահատակ Կաթողիկոսը և մեջբերեց Գևորգ Ե Հայրապետի քարոզից ընտիր հատվածներ:

Խոսքի ավարտին Գարեգին Ա Կաթողիկոսը հանդիսավորությամբ և պաշտոնապես ներկայացրեց նոր նշանակյալ Առաջնորդին՝ Նավասարդ վրդ. Կճոյանին:

Պատարագի արարողությունից հետո, մինչ Մայր Աթոռ վերադառնալը, Նորին Սրբությունը ծանոթացավ եկեղեցուն կից շինության վերակառուցման ընթացքին: Շինարարական աշխատանքների ավարտվելուց հետո այն կդառնա Ս. Մաշտոցի անունը կրող հոգևոր գիտական-կրթական կենտրոն: